

ՀՈԽՀ ՀՈՎԱԿՈՄԵՏ
№ 80 ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 80

Գ. ՂԱՐԻԲՅԱՆ

ԲԱՄԲԱԿԻ ՑԱՆՔՆ
= Ա Կ =
ՆՐԱ ԽՆԱՄՔԸ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՍՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՎՐԵԿԱՆ - 1930

三
二
一

ՀՅԱՀ ՀՅԴ ՔՈՎԿՈՄԱՏԱՏ
№ 80 ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 80


Վ. ՊԱՐԻՔՅԱՆ

ԲԱՄԲԱԿԻ ՑԱՆՔՆ

= Ռ. Ի. =

ՆՐԱ ԽՆԱՄՔԸ

Ա 42 X/1



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1930

三
二
一

ՀՅՈՒՅ ՀՅՈՒՅ ԿՈՄԱՏԵՑ
№ 80 ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 80



Վ. ՊԵՐԻՔՅԱՆ

ԲԱԼՄԲԱԿԻ ՑԱՆՔՆ

= Ա Կ =

ՆՐԱ ԽՆԱՄՔԸ

A 42 X 1



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1930

ԹԵՏՏՐԱՆԻ ՅԵՐԿՐՈՒ ՏՄԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆԻՒՄ

Դրառնել. № 4000 (ը.) Պատ. № 245 Հքատ. № 1215 Տիր. 5000

ԲԱՄԲԱԿԻ ՑԱՆՔՆ ՈՒ ՆՐԱ ԽՆԱՄՑՅՈ

Բամբակենինին բազմամյա բուլս ե, և այն լերկըներում, վորտեղ կլիմայական պայմանները նպաստավոր են, նա սպըռում ե միքանի տալի:

Բազմամյա բամբակենին տարիների ընթացքում աճելով, նրա ցողունը բարձրանում է 3-ից մինչև 5 մետր. կարող ե տպըռել յերկար տարիներ և մինունցն ժամանակ բերք տալ:

Կան յերկրներ, վորտեղ բազմամյա բամբակենու մշտկության վրա առանձին ուշադրություն են դարձնում: Հենց առաջին տարին նա բերք ե տալիս. հետեւյալ տարիներում կնգուղ տված ճյուղերը լերկորդ տարվա սկզբին կըտրում են, վորակեսղի բամբակենին թարմանաւ: Մեկ հեկարդից ստացվում է 10-ից մինչև 20 ցենտներ հնդտվոր բամբակի: Սակայն պետք ե ասել, վոր բազմամյա բամբակենու մանսնը (թելիկները) միամյա բամբակենու մանոնի համեմատությամբ վորակով բավական ցածր ե:

Մեր կլիմայական պայմաններում բամբակենին մի ամառվա ընթացքում աճում, բերք ե

տալիս ու մեռնում եւ Հետեւապես, մեզ մոտ
քամբակենին միամյա բուլս եւ Լինելով տաք լեր-
կը բուլս, բամբակենին իր տնօտան համար պա-
հանջում եւ օ - օ ամիս, և յեթե ալդ ժամանա-
կամիջոցում նույնիսկ թեթև ցըտեր լինեն, նա
շատ քիչ չափով կտուժի, նայած բույսի բարձրու-
թյան։

ԻՆՉՊԻՍԻ ՀՈՂ Ե ՀԱՐԻԱՎՈՐ ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՀԱՄԱՐ

Բամբակենին պահանջում եւ պարաբռ, փա-
փուկ հողերը Մեր հողերն ընդհանուր առմամբ
արդ հատկություններից զուրկ են, բացի գրա-
նից մեր հողերը միատեսակ ել չեն։ Մեւպահում
պատահում են սեահողեր՝ կավալին յննթաշեր-
տերով, ավագահողեր, խճահողեր, կաւալին կադ-
մըվածք ունեցող հողեր, բուզահողեր, աղուտաներ
և այլն։ Այս բոլոր հողերումն ել բաժրակ ցա-
նում են, բացի աղուտաներից։ Ըստ հողի հատ-
կության ու տեսակի յել բերք եւ ստացվում։
Որինակ՝ կավալին ու քարքարոս հողերում բամ-
բակենին լավ բերք չի տալիս, վարովիետեն նրա
արմատները դժվարությամբ են թափանցում
հողի մեջ, չեն կարողանում զարգանալ ու տա-
րածվել, հետեւապես և լավ մնվել։ Մինչդեռ սի,
փափուկ հողերում բամբակենու արմատները,

խորը թափանցելով հողի մեջ, լավ են սնվում,
փարթամանում են, առողջ ճյուղեր տալիս, հետեւ
առապես և առատ բերք ե ստացվում:

ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Վորքան ել վոր բամբակենու համար հատակացրած հողը լավ լինի, այնուամենայնիվ նա պիտի լավ մշակվի: Ամեն մի հող բերք տալիս ե իր վրա դրած խնամքի և մշակության համապատասխան: Յեթե հողամասը քիչ ե մշակվել կամ վատ ե մշակվել, նրանից ել քիչ կատ վատ բերք կստացվի, և ընդհակառակը, յեթե լավ ե մշակվել, լավ ել բերք կստացվի:

Յուրաքանչյուր բամբակացան լավ պիտի ճանաչի իր հողը և ծանոթ լինի նրա մշակության յեղանակներին, իսկ այդ հնաբավոր ե միայն այն ժամանակը, յերբ բամբակացանն իր հողը կմշակի ներկա գյուղատնտեսության թերագրած գիտելիքներով ու ցուցմունքներով:

Յեթե հողը սլուցարտացման կարիք ունի, պետք ե օլարարտացնել, խորը և լավ վարել, ցանքաշրջանառություն մտցնել և այն:

Վ. Բ. Ը

Բամբակենու ցանքի համար հողի պատրաստելն սկսվում է վարից, վորը մեծ նշանակություն ունի, մանավանդ այն տեսակետից,

թե լեռը ե վարած։ Բամբակենու համար հողը վարում են աշնանը կամ վարնանը և վարում են վոչ պակաս-քան 22 սանտիմետր խորությամբ։ Յուրաքանչյուր բամբակացան ալիտի լավ իմանա, վոր բամբակի համար անհրաժեշտ ե հողը վարել աշնանից, չփոցխել և այդ դրությամբ թողնել մինչև գարունը։

Աշնան վարի առավելությունը նախ այն ե, վոր վարած հողն ամբողջ ձմեռվա ընթացքում իր մեջ ծծում ե անձրևների և ձյունի ջրերը, վորոնց շնորհիվ հողը խոնավանում ե և ալդ խոնավությունը պահում ե իր մեջ, շուտ չի չորանում։ Եերկրորդ՝ ձմռան ցրտերի շնորհիվ հողի կոշտերը փափկում, փշրվում են, իերրորդ՝ վոր ալսպիսի ցելի մեջ յեղած զանազան բույսերի ցողուններն ու արմատները մինչև գարուն փտում են, և հողը դրանից պաշարտանում ե, վերջապես աշնան վարից և ձմռան ցրտերից փչանում են հողի մեջ գտնված և ձմեռող մսասատու թրթուրների հարսնյակները, ձվիկները և ձմեռող «չոռի» տիղերը։

Աշնան վարած արտը մինչև բամբակի ցանքը ծածկվում ե մոլախոտերով և այնքան ել փափուկ չի լինում, վոր կարելի լինի ցանքս անել, դրա համար ել աշնանը վարած հողամասը ցանելուց միջանի որ առաջ պետք ե չորս խո-

փանի գութանով, իսկ յեթե այդպիսին չկա, առաջ արորով (չութով) կը կնավար անել:

Բամբակի ցանքերի համար մեզ մոտ աշնանավար անում են 25—30 տոկոսը միայն: Դա բացատրվում է նրանով, վոր աշնանը մենք աղատ հաղ չենք ունենում, վորովհետեւ նրանք պրաղված են լինում բամբակենիով, իսկ վերջինի բերք հավաքելը տեսում է մինչև նոյեմբերի վերջերը. իսկ այդ ժամանակ հողը ցըտից պնդանում ե և վարելն անհնարին դառնում:

Ալսպիսով, բամբակենուն հատկացված հողերի մեծ մասը մեզ մոտ վարում են դաշնանը, ցանելուց մի 2—3 շաբաթ առաջ: Բամբակացանն ել գտնան վարը շուտ չի սկսում, նախ վորովհետեւ մինչև ցանելը նրա արտը ծածկվում է մոլախտերով, և յերկրորդ՝ վոր հողը խոնավ լինելով՝ վարելիս մեծ կոշտեր ե տալիս, վորոնց փխրացնելու համար պետք ե բավական աշխատանք թափել և վերջապես, վոր ամենազլսավորն ե, խոնավ վարած հողը մինչև ցանքսը չորսանում և պնդանում ե:

ՅԵՐԲ ՑԱՆԵԼ

Մեղ մատ բամբակը պետք ե ցանել ապրիլ 20-ից վոչ շուտ, վորովհետեւ բամբակի սերմը ծլելու համար պահանջում է վորոշ տաքություն:

Նա ցորենից կամ գարուց զանազանվում ենքանով, վոր դրանց սերմերը նույնիսկ ծլունի տակ ել ծլու մենա Յանքը շարունակվում ե մինչև մայիսի 15-ը, վորից հետո կատարված ցանքը համարվում ե ուշացած և ալդպիսի ցանքը պարարտացված ուժեղ սեահողերում չի բացվի իր ժամանակին, կըրտահարվի։ Ավազալին հողերում միքիչ ուշ ցանած բամբակը բացվում եւ։

Յանելուց առաջ վարած կամ կրկնահերկ արտօծ հողամասը լավ փոցխում են լերկաթե «զիգ-զագ» փոցխով, իսկ կոշտ հողերը փոցխում են ափսեավոր փոցխով, արտի փոս և բարձր տեղերը բահով հավասարեցնում, վորից հետո հողամասը ցանելու համար արդեն պատրաստ եւ։

Յանքը կտտարում են զանազան ձևի և տեսակի։ Մենք այստեղ կանգ կառնենք միայն շաղացանի և շարքացանի վրա։

Շարքացանի դեպքում սերմում են ձեռքով, մի հեկտարի վրա շաղ տալով 110-ից մինչև 125 կլգ. սերմ. շաղ տալուց հետո տեղական փայտե փոցխով փոցխում են՝ սերմերը ծածկելու համար։ Այսուհետեւ մարկոսով թմբեր կազում՝ ջրելու համար։

Ջրել պետք ե շատ զգուշությամբ. շատ ջուր չպիտի բաց թողնել, վորովհետեւ շատ բաց թողած ջուրը տեղից կհանի սերմերը և հետը

կոտանի, իսկ տեղ-տեղ ել ցանած սերմի վրա
հաստ շերտով հող ու ավաղ կլեցնի, և սերմն
այլես չի ծլի

3—4 որ անց ռքեշը» դալուց հետո
տափանում են: Տափանելն անհրաժեշտ ե
և կարենը նշանակություն ունի: Նու պիտի կա-
տարվի իր ժամանակին, վոչ ուշ և վոչ ելքուտ:

Տափանելն այն նշանակությունն ունի, վոր
նախ՝ հողի լերեսը փխրացնում ե, վոչնչացնելով
ջրելուց առաջացած կեղևն ու դրանով հեշտու-
թյամբ բամբակի ծլելը և լերկրորդ՝ տափաննիր
ծանրությամբ սերմերը մոտեցնում ե հողի խո-
նավ մասնիկներին, վորոնք ջուր ստանալով շուտ
են ծլում:

Շաղացանի գեպքում 3—4 անգամ ավելի
սերմ ե դնում, քան շարքացանի գեպքում: Շար-
քացանի գեպքում սերմերն ընկնելով զանազան
խորության վրա, միաժամանակ չեն դուրս գա-
լիս, ուստի միատեսակ չեն զարգանում ու բերք
տալիս. մի տեղ խիտ ե լինում. իսկ մի այլ տեղ՝
նոսր. այդ գեպքում բերքն ել հավասար չի լինում:

Բացի այդ շաղացան բամբակի մշակու-
թյունը պահանջում է մեծ թվով բանվորական
ձեռքեր, վորովինետև մեքենաովտագործումն այս
գեպքում բացակայում ե:

Իսկ մեղ հալտնի լե, վոր լեթե բամբակի

քաղճանը նույնիսկ մի որ ուշանա, նրա բերքը
վորոշ տոկոսով կապակասի:

Ճանքի յերկրորդ ձեր շարքացանն ե, վորը
և պետք ե համարել ամենից լավը:

Շարքացանի դեպքում թմբերը պետք ե լի-
նեն ուղիղ և մեկը մյուսից հավասար հեռավո-
րության վրա: Թմբերը պիտի կապել (մարկոսել)՝
լարով, այսինքն հողամասի յերկու ծալրամասում
ցցեր տնկել, արդ ցցերին կապած թելի ուղղու-
թյամբ ել մարկոսել:

Վերջացնելով առաջին թմբի կապելը, շա-
րումնակում են կապել մնացած բոլոր թմբերը:

Մարդերը կարող են լինել զանազան չայ-
նության: 1¹/₂-ից մինչև 2 մետր և ավելի,
նայած հողի ուժին ու մակերեսութին: Ուժեղ
հողամասներում տվելի լախ մարգեր են կապում,
նույնն անում են նաև ջրառատ շրջաններում:

Մարկոսելուց հետո բամբակի շարքացան
մեքենայով ցանում են: Նախած մարդի լայ-
նությանը՝ ցանում են 3 - 4 և ավելի շարք, վո-
րոնց հեռավորությունը միմյանցից լինում է
զանազան, սկսած 40 սանտիմետրից մինչև 80
սանտիմետր: Ուժեղ հողերում շարքերը միմյան-
ցից հեռու լին անում, իսկ ուժասպառ հողե-
րում՝ մոխիկ:

Վորապեսղի սերմը ցանվի ուղիղ շարքերով,

շարքացան մեքենալի կողքին կա մեկ մետր լեռ-
կայնության վայտե կամ յերկաթե մարկոյեր
(գործիք)։ շարքացանի աշխատանքի ժամանակ
նրա հետ զնալով մարդի մեջ ուղիղ գծեր ե
անում, հետքեր թողնում, վորով և ընթանում
ե ձի լծած մեքենան։

Շարքացան մեքենան ունի այն հարմագու-
թյունը, վոր նրանով կարելի յե ցանել ցանկա-
ցած ձևով, խոր, լեռես, խիտ կամ նոսր։ Մեկ
որում, 10 ժամվա ընթացքում, մեկ ձիով և լեռ-
կու բանվորով կարելի յե մեկ ու կես հեկտար
ցանել։

Շարքացանք կարելի յե անել նաև ձեռքով։
Արդեն պատրաստված մարդերի մի ծայրից մըուս
ծայրը լար են կապում և այդ լարի ուղղությամբ
30—40 սանտիմետր իրարից հեռու փոսիկներ
բացում և յուրաքանչյուր փոսի մեջ դցում են
6—10 հատ սերմ և ծածկում հողով, վորից հե-
տո ջրում և «քեշը» գալուց հետո տափանում են։

Բամբակի սերմը թե շարքացանով ցանելիս
և թե ձեռքով անկելիս և սանախմետրից ավելի
խորության չպետք ե լինի։ Ցանելուց առաջ
սերմը մոխրի հետ խառնած քիչ ջրում պիտի
թրջել, վորակեսզի սերմերն իրարից բաժանվեն։

Ձեռքով անկելիս մեկ հեկտարին զնում ե
15 կիլոգրամմից վոչ ավելի, շարքացանի դեպ-

քում (մեքենայով)՝ 50 կիլոգրամմ և շաղացանի դեպքում՝ մինչև 125 կիլոգրամմ:

Համեմատելով ցանելու վերը նշած յերկու ձերը՝ պետք է շեշտել, վոր ամենալավ ձեզ պետք է համարել շարքացանը, այն ել մեքենայով, նկատի ունենալով հսմատարած կոլեկտիվացումը:

Շարքացանի առավելությունն այն է, վոր նա եժանացնում է բամբակի քաղհանը, վորովհետև վերջինը կատարվում է ձեռքի և ձիու մեքենաներով։ Շարքացանը բամբակենու բոլոր բույսերի համար հավասար պայմաններ են ստեղծում։ Նրանք հավասար աճում են և հավասար ել անունդ ու լույս ստանում։

Շարքացանքը քիչ սերմ և պահանջում, դրա շնորհիվ ել հեշտանում են ան բամբակենու խնամքը, բժշկելը և հավաքելը։

Շարքացանքը և շաղացանքը կարելի յե կատարել և ռարատով, այսինքն՝ ցանելուց 10—12 որ առաջ վարած հողամասը ջրում են, «քեշը» գալուց հետո և խոփանի գութանով կամ արորով կրկնահերկ աճում, տափանում և տուանց թմբեր կապելու՝ շարքացանքը ցանում սերմը։ Այդ դեպքում սերմը պիտի մի որ առաջ թրջել, վորպեսզի միքիչ ծլի։ «Արատը» լինում և ձմեռային և դարնանալին։

Բամբակի ալֆմյան գործադրվող շարքացան մեքենան սերմը ցանում և անընդհատ, գործողելով 10—15 անգամ ավելի սերմ, քան հարկավոր է։ Բուսածածկ ավելորդ ծիլերը պետք է հեռացնել և շարքերի մեջ պահել այնքան քանակությամբ բույս, վորքանաներաժեշտում է։ Դա կոչվում է նոսրացում—սեհրակացում։

Հենց վոր հողի տակից դուրս են դալիս ուղաջին ծիլերը և սկսում են բարձրանալ, այսինքն ցանելուց մոտավորապես 20—25 որ հետո, լերը բամբակենին բարձրանում և հասնում են մինչև 15 սանտիմետրի, այդ ժամանակ տուածին քաղիանի հետ միասին կատարում են նաև տուածին նոսրացումը։

Նոսրացումը կատարում են, վորպեսզի բամբակենու բույսերը մեկը մյուսին չխանգարեն, ավելորդ սափեր չանեն և ընդհանրապես միահավասար պայմաններում աճեն, այսինքն՝ քիչ թե շատ հափասար չափով լույս, ոդ, սննդանյութ, ջուր և այլն ստանան։ Բամբակենին նոսրացնում են յերկու անգամ՝ քաղիանի հետ միասին։

Եերերորդ նոսրացումից հետո շարքում մնում է այնքան բույս, վորքան պահանջվում է։ Ընդհանրապես, բույսը բույսից պիտի լինի 30—40 սանտիմետր հեռավորության վրա և ամեն մի բնում յերկու բույս։

Քաղհանը բամբակենու մշակության ամենակարևոր և սննիքաժեշտ աշխատանքներից մեկն եւ Յեթե ժամանակին արտը չքաղհանվի, մոլախոսերը, վորոնք ավելի շուտ են զարդանում քան բամբակենին, կխեղդեն վերջինին։ Այդպատճառով ել անհրաժեշտ է վոչնչացնել մոլախոտերը և արտը միշտ մաքուր պահել։

Քաղհանելով փխրացվում ե հողի յերեսը, փխրացվում ե նաև կեղես։ Բամբակենու քաղհանը և փխրացվումը կատարվում են միաժամանակ, կատարվում են ձեռքի կամ ձիու կուլտիվատորով՝ շարքերի մեջ, բույսերի արանքներում ձեռքով՝ հողուրագի միջոցով։

Հողուրագով աշխատելիս պիտի շատ զգուշ լինել, վորապես արմատները չկտրաւավեն։

Ինչպես վերն ասվեց, առաջին քաղհանը կատարվում է առաջին նոսրացման հետ միաժամանակ՝ ցանքից մոտավորապես 20—25 որ հետո

Յերկրորդ քաղհանը կատարվում է նույնապես յերկրորդ նոսրացման հետ, յերբ հողն սկըսում է ծածկվել մոլախոտերով, կամ առաջին քաղհանից հետո առաջին անգամ է ջրվում, չհաշված ցանքի ջուրը։

Դա կատարում են մոտավորապես հունիսի վերջերին։ Յերրորդ քաղհանը և փխրացվումը կատարվում է հուլիսի 20—25-ին, և յեթե չոր-

բորդ քաղհանի կարիք եւ զգացվում, ապօտ այդ
ել կատարվում եւ ոգոստոսի սկզբներին:

Բամբակացանը լավ պիտի իմանա, վոր ա-
մնն մի ջրելուց հետո հողը նորից կեղե եւ բըռ-
նում, ավելի յի պնդանում, և մոլախոսեցը նո-
րից դարդանում են ավելի ուժեղ թափով։ Ալդ
բոլորից տղատվելու համար լուրաքանչյուր ան-
դամ ջրելուց հետո արտը պիտի քաղհանել և
փխրացնել և վոչ թե քաղհանել ու փխրացնել և
հետո միայն ջրել, ինչպես անում են մեր զյու-
ղացիները։

Համենայն զետս, բամբակենու արտը միայն
այն ժամանուկ կարելի լի լավ խնամված համա-
րել, յերբ քաղհանը կատարված ե իր ժամանա-
կին և կանոնավոր ձևով։ Բամբակենու արտում
բացի բամբակից ուրիշ վոչ մի բույս չպետք ե
լինի, և հողն ել պիտի լինի փափուկ ու փուխր։
Բամբակենու համար վորքան մեծ նշանակություն
ունի նոսրացումը, քաղհանն ու փխրացումը,
նույնքան մեծ նշանակություն ունի նաև ջրելը։

Մեղ մոտ բամբակենին իր զարդացման հա-
մար պահանջում ե ջուր, խոհ կամ յերկրներ,
զորտեղ բամբակը չեն ջրում, նու տնում ե
պեմիւ։

Մեր բամբակագործական շրջանների հողերը
լինելով տարբեր հատկության, ջրի նկատմամբ

ել տարբեր պահանջներ ունեն, Այն հողերում, վորոնց ստորերկրյա ջրերը մոտ են հողի վերին շերտերին, ջրվում են 1—2 անգամ, իսկ այն հողերը, վորոնց ստորերկրյա ջրերը խորն են գտնվում, ջրվում են 3—4 անգամ և ավելի:


Հնդկանրապես բամբակենին շատ ջուր չի սիրում: Աճեն մի ջրելիս ավելանում են րազարգացման շրջանը, հետևաբար ուշ ե հանում և ընդհակառակը, յերբ բամբակենին քիչ են ջրում, նրա գլխավոր արմատը ջշի պակասություն զգալով՝ սկսում ե ավելի խորը թափանցել հողի մեջ:

Այս դեպքում ջրի կարիքն ստիպում ե բույսին լերէաբացնել և ուժեղացնել իր զլխափօր արմատը, իսկ ուժեղ արմատ ունեցող բույսերը լավ ըերը են առաջիս:

Ցանելուց 2 ամիս հետո բամբակենին սկսում ե ծաղկել, իսկ ծաղկելուց $2\frac{1}{2}$ —3 ամիս հետո սկսում են աստիճանաբար բացվել հասած կընդունակությունները:

Մեկ հեկտարից ստացվում ե 6—15 ցենտներ հնդամբ բամբակ: Կան տեղեր, վորակղ ավելի ընթաց ե ստացվում:

Բերքը հավաքում են 3 անգամ, և բերքահամբաքը տեսում ե մինչև նոյեմբերի վերջը:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039208

(044)

ԳԻՆԸ Յ ԿՈՄ ՄԱՍ. (1/2 մամուլ)

A 1
4271



В. Гарibian

Посев хлопчатника и уход за ним

Госиздат ССР Армении
Эривань—1930